չուրջանակի, և ցորեան և ալիւր և այլ ինչ ի գիւղօրէից ոչ կարէին բերել. և սակաւացաւ հացն հոգևպահ. և աստ էր տեսանել զկանս աղքատաց, և ո՞վ կարէր ողբակից չի լինիլ նոցա. աստուածաշունչն իբր զարմանալով ասէ, և չնչին փայտի հաւատան մարդիք զանձինս. իսկ աստ ոչ փայտի, այլ եղէգան... Ջուրն ինն մարդապօյ բարձրացաւ ի հասարակ ընթացիցն. ի պարտիզի եկեղեցւոյս մարդապօյ և կէս բարձր էր Ջուրն, և ի հին տունն և յաշխանան եմուտ Ջուրն. և մեք ի բիօդան ի քաղաքամիջի բնակէաք, և հայր սիմոնն ձկնորսութեան պարապէր ի բիօդայէն. և աւելի քան զերեսուն ձկունս որսաց և կարէր հազարաւորս որսալ, այլ ես այնչափ թողի, զի լիցի կատուաց կերակուր զի երկնչէի ուտել. ի փողոցս քաղաքին վրխտային ձկունքն, զի զեղան ի թունայէն ձկունքն և մտին ի քաղաքն վասն առատ և պարարտ կերակուրս գտանելոյ։ Ինն հարիւր տուն ի հիմանց տապալեցաւ, և ոչ մնաց և ոչ մի տուն, յորում ոչ իցէ մնասեալ Ջուրն. կամ ի մի կողմն փլոյց, կամ ի մի կողմն ծռեցոյց, և կամ ճայթռածս ետ. սակաւ տուն և տեղի մնաց ի քաղաքիս, յորս ոչ եմուտ Ջուրն, բայց ընդերկրեայ անցիւք զհիմունս տանց կակղացոյց և մնասեաց. ես հնգետասան օր ի բիօդան բնակեցայ և յետոյ մտի ի տուն փախուցեալ ի գարշահոտութենէ Ջրոյն և ի յանձրևոյ. զի գրէթէ ամիս երիս անդադար անձրևէր. իսկ հայր սիմոնն յետ ութուտասան աւուր. զի եկեղեցւոյ և տան կահքն էին ի բիօդան, և չէր հնար միայն թողուլ։ Այժմ չնորհիւ տեառն ի տուն բնակիմք, բայց չև են կարգաւորեալ կահք տան. և դեռ ունի Ջուրն զփողոցն որ յանդիման եկեղեցւոյս, և կարմունճով զան յեկեղեցին, և սակաւ սակաւ նուազի Ջուրն։ Բայց այնպիսի ինչ արար Ջուրն քաղաքիս, որ մինչև ցյիսուն ամ յառաջին աստիճանն ոչ կարէ գալ քաղաքն։... այժմ աչօք բացօք տեսի, զի Ջուրս այս յոր պարտէզ և եմուտ զամենայն բոյս և զամենայն ծառս ջորացոյց, և զհողն այնպէս վտտացոյց, մինչև ոչինչ կարէ բուսուցանել, և եթէ բուսուսցէ ևս վտիտ յոյժ, և մարդիք որք առ հարկի ի մէջ Ջրոյն գայլէին, խոցիւք և վիրօք ելից զմարմինս նոցա. զՋրհորս ապականեաց։... այժմ լուայ թէ թիսայ գետն ևս պակասի, և է անցք դէպի թմշուար...։

Ցամի տեառն 1770 յուլիսի 18 Նուաստ ծառայ
[Պաշպալով] Հ. Կարապետ վրդ. Մխիթ.

ՄՂԷ.

Եր. Տէր Կոմիտասի համանուն թոռը մեր նամակագրին միջոցաւ մայրավանքէս կը խնդրէ՝ որ իրեն ղրկուի իր պապուն մասին կենսագրական ծանօթութիւնները։

Գերաւեծար Գերյարգելի Աբբայնօր մերոյ Տեառն Տեառն Ստեփաննոսի վրդպ.ի ողջոյն

... Ի աստ պատանի մի՝ 22 ամաց թոռն երանելի տէր Կոմիտասին՝ որ և նա ըստ անուան պապուն իւրոյ կոչի Կոմիտաս, և Ֆէէնկերէն Կօզմաս, զի է տիլօղլանի Անապօլիի էլչուն. որոյ հայրն յոհաննէս, զոր քաջ ճանաչէ մեր Հ. մկրտիչն, էր թէրճիման նոյնոյ էլչիի։ Այս պատանի այժմ ի խնդիր է շարադրել զվարս պապոյն իւրոյ երանելի տէր կոմիտասին. և լուեալ թէ ի վանս մեր կայ շարադրեալ ի մեր Վ. Հ. Մատթէոս Վ. խնդրէ մեծաւ ազերսանօք զօրինակ մի այնր շարադրելոյ ի Հ. Մատթէոսէն։ Ապա խնդրեմ և ես ընդ նմա, զի տայցէք օրինակել զայն. և առաքեսջիք այսր տիսփացիօյով. զայսմանէ և մեր Թոմայ աղայն սեղբոսեան ունի գրել կամ առ ձեզ և կամ առ եղբայր իւր յոհաննէս աղայն։ Խնդրէ և զայս. զի յորժամ օրինակեալ զայն առաքեսջիք այսր, գրեսցէ Հ. Մատթէոսն և զայս բան թէ ի հաւատարիմ պատմչաց և ի պէսպէս ձեռագիր թղթոց հաւատարիմ անձանց գրողաց զվարս նորա, լուեալ կամ առեալ շարադրեցի. և թէ կարելի է, դիցէ ևս զանուանս և զհանգամանս պատմչաց և ձեռագիր թղթոյն։ Խնդրէ